

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1981

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՄԵԾԱԳՈՅՆ ՄՈՆԹՐԷԱԼԻ



ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN HOLY APOSTOLIC CHURCH
OF GREATER MONTREAL

615 STUART AVE., OUTREMONT, P.Q. H2V 3H2
TEL.: 279-3066 — 279-6884

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՉՆԱՆՈՒՄԻ 1981 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԿԱԶՄ

Տոբթ. Յովհաննէս Պալատանեան	ատենապետ
Պրն. Ժիրայր Այվատեան	ատենադպիր
Պրն. Համբարձում Կէօշէրեան	անդամ
Տոբթ. Հրայր Տէր Գէորգեան	անդամ
Պրն. Վահէ Բէթլի	անդամ

ԹԵԿՆԱԾՈՒՄԵՐ 1982 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԴԻՒԱՆԻ

ԱՏԵՆԱՊԵՏՈՒԹԵԱՆ

(Ընտրելի մէկական ԳՈԳԻ միայն)

ԱՏԵՆԱԴՊՐՈՒԹԵԱՆ

ՄԱՄՈՒԹԵԱՆ ՆՈՒՊԱՐ
ՏՈԲԹ. ՊԱԼԱՊԱՆԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ

ԱՅՎԱՏԵԱՆ ԱՆԱՀԻՏ
ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԷՄՄԱ

ՊԱՏԳԱՄԱԽՈՐՆԵՐՈՒ

(Ընտրելի 5 ԳՈԳԻ չորս տարուան)

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՑ

(ընտրելի 4-ԳՈԳԻ երկու տարուան)

ՏՈԲԹ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ
 ԱՅՎԱՏԵԱՆ ԺԻՐԱՅՐ
 ՏՈԲԹ. ԿԵՕՆԺԵԱՆ ԱՐՇԱԽԻՐ
 ՄԱՄՈՒԹԵԱՆ ՆՈՒՊԱՐ
 ՄԱՆՈՒԿԵԱՆ ԳԵՈՐԳ
 ՉԱՏՐԺԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
 ՊԱՄՄԱԺԵԱՆ ԱՐԹՕ
 ՏՈԲԹ. ՏԷՐ ԳԵՈՐԳԵԱՆ ՀՐԱՅՐ
 ԲԷԹԼԻ ՎԱՀԷ
 ՏՈԲԹ. ԲԷՉԵԱՆ ԼԵՒՈՆ

ԱԳԹՈՐՈՍԵԱՆ ՅԱԿՈՒՐ
 ՏՈԲԹ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ
 ԱԽԵՏԵԱՆ ՏԻՐԱՆ
 ՏՈԲԹ. ԽԱՉԻԿԵԱՆ ՅԱԿՈՒՐ
 ՆԱԶԱՐԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
 ՆԱԶԱՐԷՅԹԵԱՆ ՊԱՐԳԵԻ
 ՇԻՐԻՆԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
 ՓԵԼԹԷՐԵԱՆ ԳԵՈՐԳ

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՉՆԱՆՈՒՄԻ

(Ընտրելի 5 ԳՈԳԻ մէկ տարուան)

ՀԱՇՈՒԹԵՔՆՆԻՉ ՄԱՐՄՆԻ

(ընտրելի 3 ԳՈԳԻ մէկ տարուան)

ԱՐՈՇԵԱՆ ԿԱՐՊԻՍ
 ԿԷՐԻԹԵԱՆ ԱՐԱ
 ԺՀԱՆԵԱՆ ԱԽԵՏԻՍ
 ՄԵԼԻԹԵԱՆ ԱՐԱՄ
 ՇԱԶԱՐԵԱՆ ՎԱՀԱՆ
 ՊԱԼԵԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ
 ՍՐՄԱԲԷՇԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ
 ՏԷՐ ՕՀԱՆՆԷՍԵԱՆ ՍՐԲՈՒՀԻ
 ԲԷՐԷՍԹԷՅԵԱՆ ՎԱՀԷ
 ՖԱԶԼԵԱՆ ՊԵՐԺ

ԱՐԱՊԵԱՆ ՎԱՀԱԳՆ
 ԷՍԷՆ ՊԵՐԺ
 ԹՈՐԻԿԵԱՆ ՀՐԱՉ
 ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԹՈՎՄԱՍ
 ԿՈՒՏՍՈՒԹԵԱՆ ՄԻՍԱԲ
 ՇԻՐԻՆԵԱՆ ՍՈՒՐԷՆ

Աստուծոյ շնորհքով ու ողորմութեամբ տարի մը եւս բոլորեցինք այս գաղութէն ներս, որպէս անդամներ եւ համայնք Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ: Միշտ պահեցինք մեր հաւատքի ու նուիրումի ոգին Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նկատմամբ:

Կ'ուզեմ իմ անկեղծ շնորհակալութիւններս յայտնել Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանին, որ վստահեցաւ ինձի յանձնել հոգեւոր մատակարարութեան պաշտօնը մոնթրէալայոյութեան, ինչպէս նաեւ պարտք կը զգամ յայտնելու իմ անկեղծ զգացումներս Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցւոյ Պատուարժան Ժխական Խորհուրդին եւ անոր յարգարժան Ատենապետին, որ հաւանութիւնը յայտնեցին ինձ ընդունիլ այս գաղութին՝ որպէս հոգեւոր մատակարար:

Անցնող եօթը ամիսներէ ի վեր կը ծառայեմ Մոնթրէալի պատուական համայնքին: Իմ կարելին ի գործ դրի եւ կը դնեմ ծառայելու այս համայնքին հոգեւոր, մշակութային եւ կրթական բաւարարման: Մենք հետեւեցանք ու գործադրեցինք Թեմի Բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հօր տուած բոլոր հրահանգները մեր եկեղեցւոյ կանոնական, արարողական ու վարչական մարզերէն ներս: Տարուան ընթացքին կատարուած են Ս. Պատարագի եւ միւս եկեղեցական արարողութիւնները անխափան կերպով:

Զանազան առիթներով ընդունեցինք այցելութիւնները մեր հոգեւոր եղբայրներուն: Հոգշ. Տ. Ենտրիք Ժ. Վրդ. Գասպարեանի, Հոգշ. Տ. Ներսէս Ժ. Վրդ. Բապուճեանի, Հոգշ. Տ. Խաժակ Վրդ. Պարսամեանի, Հոգշ. Տ. Եզնիկ Արդյ. Խրքածեանի, Մայր հայրենիքէն Արժ. Տ. Գալուստ Զինյ. Զէքլիկեանի Գերշ. Տ. Արիս Եպս. Ծիրվանեանի, Տ. Եղիշէ Ժ. Վրդ. Կիզիրեանի:

Այս տարեշրջանին կատարուած են հետեւեալ խորհրդակատարութիւնները. Մկրտունթիւն՝ 44, Պսակադրութիւն՝ 19 եւ մահազրութիւն՝ 14:

Եկեղեցական արարողութեանց կարգին պէտք է նշենք Կոմիտաս Դարաց Երգչախումբի մասնակցութիւնները, որոնք նուիրուած ոգիով եկան եւ փայլը աւելցուցին մեր եկեղեցւոյ գեղեցիկ երգեցողութիւններուն: Մեր գնահատանքն ու օրհնութիւնը Կոմիտաս Դարաց Դաս Երգչախումբին վարչական կազմին, իրենց յարգարժան ատենապետին՝ Պրն. Գէորգ Փելթեքեանի, վարիչներու, երգեհոնարներու եւ սիրելի անդամ-անդամուհիներուն անխտիր:

Իմ խորին գնահատանքս ու շնորհակալութիւններս իրենց պարտականութեանց գիտակից սարկաւազներուն եւ Լուսաւորիչ ղախիրներուն, որոնք ամէն Կիրակի մեզի հետ անխափան ծառայեցին ի պայծառութիւն մեր եկեղեցւոյ:

Ենտրակալութիւն եկեղեցւոյ պաշտօնաթերթ՝ Բուրաստան՝ ի խմբագրական կազմին եւ ի մասնաւորի Պրն. Պերմ ֆազլեանին իր տարած բծախնդիր ու անխոնջ աշխատանքին համար:

Մասնաւոր շնորհակալութիւններ եկեղեցւոյս Տիկնանց Միութեան անդամներու ցուցաբերած զոհողութեան ոգիին: Միշտ հպարտ ենք իրենցմով, անոնք իրենց աշխատանքներով մեր ձեռնարկներու յաջողութիւնը կրկնապատկեցին:

Ենտրակալութիւններ Եաբաթօրեայ Վարժարանի Խնամակալութեան, Տնօրէնին, ուսուցչաց կազմին, որոնք մեղուաշան աշխատանքով կը տանին դժուարին գործը մեր մատղաշ սերունդին մէջ արթնցնելու իրենց պատկանելիութիւնը:

Ենտրակալութիւն Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբին իրենց երկար տարիներու ծառայութեան համար:

Մեզի տեղեակ պահուած հիւանդներուն հիւանդանոցներու կամ բնակարաններու մէջ այցելութիւններով մեր կարելին ըրինք զիրենք մխիթարելու:

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ
1 9 8 1 -ՏԱՐԵՇՐԶԱՆԻ

-Շար. 2-

Շատ ուզեցինք եւ փափաքեցանք, մասնաւորաբար Ս. Ծնունդի առթիւ այցելել բնակարանները մեր ծխականներուն եւ կատարել տունօրհնէք. այս պարագան ըլլայ մամուլով եւ ըլլայ մեր քարոզներու ընթացքին յիշեցուցինք մեր հաւատացեալ ժողովուրդին, թէ մենք միշտ տրամադիր ենք որեւէ ատեն, սակայն, ցարդ չորս ազգայիններէ միայն հրաւէր ստացանք եւ փութացինք մեր պարտականութիւնը կատարելու: Կը յուսանք, որ Փրկչի Ս. Յարութեան տօնին առթիւ մեր ժողովուրդը աւելի բժախնդիր պիտի գտնուի այս ուղղութեամբ:

Կ'ուզեմ իմ անկեղծ շնորհակալութիւններս ու գնահատանքս յայտնել մեր շատ սիրելի դիւանապետ՝ Դրն. Վահէ Բէթլիին, իր եղբայրական գուրգուրանքին ու հմտութեան շնորհիւ բնաւ առանձին չզգացինք մենք զմեզ, այս օտար ափերուն վրայ միշտ զօրավիզ եղաւ ու քաջալերէց եւ դիւրացուց մեր պարտականութիւնը:

Կը փափաքիմ, որ Ամենակալն Աստուած իւրաքանչիւրիդ պարգեւէ քաջատոյժութիւն եւ երջանկութիւն շարունակելու համար բարի եւ Աստուածահաճոյ գործեր:

Աղօթարար
Տ. ԲԱՐԹՈՂ Ա. ԲԶՆՅ. ԽՐԶԱՃԵԱՆ

Ժխական խորհուրդս, նորընտիր հինգ անդամներու մասնակցութեամբ իր անդրանիկ նիստը գումարեց 25 Մարտ 1981-ին, նախագահութեամբ հոգեւոր հովիւ Հոգ2. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի եւ ընտրեց իր նոր ղիւանը ըստ հետեւեալին.

Պրն. Արթո Պասմաճեան՝ առննապետ, Պրն. Դարօ Ալէքեան՝ փոխ-առննապետ, Պրն. Ժիրայր Այվատեան՝ առննաղալիր, Պրն. Անդրանիկ Թադոսեան՝ փոխ-առննաղալիր, Տոքթ. Յարութիւն Արզումանեան՝ գանձապահ, Պրն. Գրիգոր Տիգրանեան, փոխ-գանձապահ, Տոքթ. Արթօ Տէմիրճեան, Տոքթ. Յակոբ Խաչիկեան եւ Պրն. Աշոտ Գարիպեան՝ խորհրդականներ:

Պրն. Դարօ Ալէքեանի գործի բերումով հրաժարելուն պատճառաւ, պարտականութեան հրաւիրուեցաւ Ա. պահեստի՝ Պրն. Գէորգ Մանուկեան եւ փոխ-առննապետ ընտրուեցաւ՝ Տոքթ. Յակոբ Խաչիկեան:

Այս տարեշրջանին խորհուրդս գումարեց հոգեւորականի նախագահութեամբ 46 հերթական նիստեր համերաշխ ու խաղաղ մթնոլորտի մէջ. բժախնդրօրէն կառչած միայն ու միայն եկեղեցւոյ բարոյական շահերուն, նախորդ Պատարժան ժողովի դ վաւերացուցած ու փոխանցած աշխատութիւններն ու պարտականութիւնները գէթ իրականացնելու ջանասիրութեամբ:

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆՔ.— Ժխական խորհուրդս իրեն ենթակայ գանազան մարմիններու հետ ունեցաւ մասնակի հանդիպումներ, տեղեկանալու համար նոր շրջանի ծրագրելի աշխատութեանց, եւ անշուշտ կարելի սահմաններու մէջ օգնելու անհրաժեշտ կարիքներուն: Նախորդ շրջաններու նման ժխականի անդամները սիրով ստանձնեցին պաշտօններ, մասնակցելով անոնց ժողովներուն, մեր եւ անոնց միջեւ յարաբերական կապերը սերտացնելու, շուտափոյթ օժանդակելու նախամտածումով: Յետ մի քանի ժողովներու մանրագնին քննութեան, որոշուեցաւ Դեկտեմբեր ամսոյ մէջ վերջ տալ 12 տարիներէ ի վեր միշտ նոյն կազմով գործող Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբի ղիւանին եւ կարողացանք օժտել այս Յանձնախումբը հաւատաւոր, փորձառու, նամանաւանդ տինամիջ առննապետով մը յանձին՝ Պրն. Պերճ ֆազլեանի եւ կը յուսանք, թէ Մամիկոնեան Մշակութայինը, հին անդամներու մասնակցութեամբ օժտուած նոր ուժերով պիտի շնորհէ, ժխականի յաջորդ տեղեկատուին արդիւնաշատ, խանդավառ ու պատուաբեր տողեր մրոտելու պատիւը:

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒՒ ՄԵԿՆՈՒՄ.— խորհուրդս հազիւ ամփոփուած իր կատարելի գործերուն մէջ, երրորդ նիստին կը ստանայ Առաջնորդարանէն նամակ մը, որուն մէջ կը շեշտուի, թէ հոգեւոր հովիւ Հայր Պարէտ ղիմած է Սրբազան Առաջնորդին այլ տեղ փոխադրուելու խնդրանօք. եւ Գերշ. Սրբազան Հայրը ընթացք տալով իր ղիմումին, նշանակած է զինք Լորէնսի Ս. Խաչ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւի պաշտօնին: Այս անակնկալը շուարումի կը մատնէ կազմս. կը ղիմենք Առաջնորդ Սրբազան Հօր, հարցը վերափոխութեան ենթարկելու խնդրանօք, սակայն, թէ Հայր Սուրբը եւ թէ Գերշ. Առաջնորդը իրենց որոշման մէջ կը մնան հաստատ: Արդ, մեզի կը մնար Հայր Սուրբի մեզի մատուցած ծառայութեանց առ ի երախտագիտութիւն, առ ի շնորհակալութիւն, հրաժեշտի հանդիսութիւն մը կազմակերպել. պրպտել, փնտռել նոր մը որ պիտի կարենայ զօհացում տալ զաղուծի բոլոր խաւերուն: Հանդիսութիւնը կատարուեցաւ տպաւորիչ, մասնակցութեամբ եկեղեցւոյս բոլոր մարմիններուն եւ պաշտօնական ներկայացուցիչներու, եւ Հայր Պարէտ մեզմէ բաժնուեցաւ Մայիս 31-ին:

ՆՈՐ ՀՈԳԵՒՈՐ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԺԱՄԱՆՈՒՄ.- Ընդառաջելով մեր եւ մեր Պատգամաւորներու խնդրանքին, Առաջնորդ Սրբազան Հայրը առժամեայ հոգեւոր մատակարար նշանակեց Ամերիկա նոր հասած Պոլսոյ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ երբեմնի սիրուած Աւագերէց Տ. Բարթող Ա. Բնյ. Խրքածեանը: Այս առթիւ կը փափաքինք հակիրճ բացատրութիւն մը տալ Տ. Բարթող քահանայի մասին: Ան կուզար իբրեւ առժամեայ հոգեւոր մատակարար, որովհետեւ այդ շրջաններուն, Տէր Հայրը հիւր մըն էր Ամերիկա. թէեւ որոշած էր հաստատուիլ, սակայն, չէին վերջացած ձեւակերպութիւնները. Տէր Հայրը կը պատկանէր ոչ թէ Ամերիկայի թեմին, այլ Պոլսոյ Հոգեւորականաց դասուն: Ուրեմն, մեր սիրելի Առաջնորդ Սրբազանին այսպիսի մէկ կարգադրութիւնը շնորհ մըն էր Տէր Հօր՝ երախտօք դիմաւորելի շնորհ մը բոլորիս:

Արժ. Տ. Բարթող Ա. Բնյ. Խրքածեանի Հոգշ. Հայր Պարէտի հրածեշտի հանդիսութեան ներկայ գտնուելը եղաւ առիթ մը զինքը գաղութիւն, գաղութը իրեն ծանօթացնելու: Յունիս 1-էն սկսեալ այսպէսով ժողովներուս նախագահեց Տէր Հայրը, կատարեց, կը կատարէ ու պիտի կատարէ Աստուծոյ ողորմութեամբ տակաւին շատ երկար տարիներ ձեռնհասօրէն մեր հոգեւոր մատակարարութիւնը, մնալով միշտ մշակ առանց ամօթոյ, հովիւ քաջ, հովիւ բարի որ դնէ զանձն իւր ի վերայ ոչխարաց: Յատենի ժողովիդ իրեն կը յայտնենք մեր զոհունակ ու սրտաբուխ շնորհակալութիւնները:

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ.- Խորհուրդս, մասնաւոր կարեւորութեամբ մօտեցաւ եկեղեցւոյ կալուածին ժամանակի բերմամբ պահանջք՝ նորոգութեան եւ այլ հարցերու.

- 1.- Ամբողջացնելով եկեղեցւոյ կից ասֆալթի պարագան.
- 2.- Զեռուցման դրութիւնը վերաքննութեան ենթարկելով.
- 3.- Ելեկտրական ցանցերը նորոգելով.
- 4.- Մուտքի դրան պատերու նորոգման, եկեղեցւոյ ներքնամասի ներկի համար դիմեց մասնագէտ անձերու, որոնց տուած զինքերու տարբերութիւնը պատճառ հանդիսացաւ գործադրութեան յապաղումին.
- 5.- Ծառուելով պետութեան եւ ընկերութեան ընծայած օժանդակութենէն, որոշեց փոխել Զեռուցման իւղի դրութիւնը կազմի դրութեան, որ կը խոստանայ ըլլալ կէս առ կէս աժան: Խղճամիտ հաստատութեան մը հայ ներկայացուցիչին Իետ կապ հաստատած ենք եւ ի մօտոյ պիտի յանձնենք այս գործը իրեն.
- 6.- Բաց պահելով միշտ եկեղեցւոյս դիւանատունը համայնքիս, որուն նուիրեալ, կարգապահ պատասխանատուն, մեր ամենուն սիրելի, յոյժ փորձագէտ՝ Պրն Վահէ Զէթլի կը հանդիսանայ միշտ բալասան վիշտերու, եւ փարոսը՝ կարգ մը նորեկ հայ որդիներու մշուշապատ ուղիին:
- 7.- Բուրաստան պաշտօնաթերթիս բոյրը զօրացնելով, օժանդակութեամբ ձեռնհաս, ազգանուէր տարրերու:
- 8.- Շաքաթօրեայ Վարժարանի 25-ամեակին տալով բացառիկ կարեւորութիւն, որ տեղի պիտի ունենայ Մարտ ամսոյ մէջ, նախագահութեամբ մեր սիրելի Առաջնորդ Սրբազան Հօր եւ թեթեւցնելով խիստ ծանր բեռը Վարժարանիս Խնամակալութեան կորովի ատենապետ՝ Տիկ. Էլտա Աքքիարիթեանի եւ նուիրեալ ընկերներուն:
- 9.- Տեղեկացնելով ժողովուրդին, թէ Յունիս 1-էն ի վեր, ամէն Շաքաթ երեկոյ ժամը 6-ին, տեղի կ'ունենան Հսկումի հոգեպարար արարողութիւններ, իսկ Կիրակի օրերը ժամը 10.45

-էն 11.15 Ս. Պատարագէ առաջ առաւօտեան երգեցողութիւններ.

- 10.- Որոշել. Եկեղեցւոյ Տօնախմբութեան օր, որ յետ այսու արժանավայել շուքով պիտի տօնուի, ամէն տարի, Առաջնորդարանիս բարեհաճ կարգադրութեամբ Յունիսի մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի Եւնի Վիրապէն տօնը: Այս տարի կը զուգարկի Յունիս 12-ին, Պիտի Պատարագէ եւ քարոզէ Առաջնորդ Սրբազան Հայրը.
- 11.- Որդեգրելով սաներ Արմէն-Քէպէք Ալեք Մանուկեան Վարժարանի մէջ, տօնական օրերու մասնաւորաբար շրջագայելի կամ մուտքի դրան մօտ դրուած յատուկ պնակի մը հասոյթով.
- 12.- Բժախնդրօրէն հսկելով եկեղեցւոյ պահպանման եւ մաքրութեան, այս ուղղութեամբ կը յայտնենք եւս, թէ եկեղեցւոյս ժամկոչը եւ կողակիցը խղճմտօրէն կը կատարեն իրենց պարտականութիւնը:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.- Երկու անգամներ մեր մէջ վայելեցինք հրճուողիթ ներկայու-
թիւնը Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր
Թորգոմ Արք. Մանուկեանի: Առաջին անգամ, զողութիս ազգանուէր գործիչ՝ Պրն.
Քերովբէ Պտուկեանի յուղարկաւորութեան, իսկ երկրորդը՝ Նոյնպէս ազգանուէր
անվհատ գործիչ՝ Տոքթ. Արշալիր Կէօնճեանի Վեհափառ Հայրապետին կողմէ պար-
գեւատրման պատճառաւ Խորհուրդոյս կազմակերպած հանդիսութեան իբր նախագահ:

Հ.Բ.Ը.Միութեան ցկեանս նախագահ եւ ազգային անզուգական Բարերար՝ Տիար
Ալեք Մանուկեան իր ազնուափայլ Տիկնոջ հետ, շրջապատուած Խորհուրդոյս ան-
դամներով, յաւարտ Ս. Պատարագի, անգամ մը եւս շրջագայեց եկեղեցւոյս շէնքը,
ստանալով բացատրութիւններ:

Օգոստոս 16 թուականը հանդիսացաւ յիշատակելի օր մը: Հայաստանի վարչապետ՝
Ֆատէհ Սարգսեան, մեծաթիւ հայրենի ակնաւոր անձնաւորութիւններով կը ժամանէ
եկեղեցի, պահ մը արարողութեան մասնակցելէ ետք, կ'առաջնորդուի դահլիճ, ուր
տեղի կ'ունենայ համեստ պատուասիրութիւն. կը տրուին բացատրութիւններ եւ կը
շրջագայի կալուածը, իսկ վերջին անգամ, հայրենի երեք տաղանդաւոր դէմքեր՝
Գրիգոր Խանջեան, Գոհար Գասպարեան եւ Յարութիւն Փափագեան մասնակցեցան Կոմիտաս
Դպրաց Դասու կողքին Ս. Ծննդեան առթիւ մատուցուած Ս. Պատարագի երգեցողութեանց,
դիւթելով տաճարը լեցնող հաւատացեալները:

Երեւանի հոգեւոր դասէն, Տ. Գալուստ Բհնյ. Քէքիկեան, եկեղեցւոյս բարեջան
քահանային արժանաւոր որդին՝ Հոգշ. Տ. Եզնիկ Արդյ. Խրքածեան, Հոգշ. Տ. Խաժակ
Վրդ. Պարսամեան եւ նախկին հովիւներէն՝ Հոգշ. Տ. Ենորիք Ծ. Վրդ. Գասպարեան
պատարագեցին ու քարոզեցին եկեղեցւոյս մէջ առ ի մխիթարութիւն եւ ի սփոփանք
հաւատացեալ ժողովրդեան:

ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ.- Թեմիս Պատգամաւորական ժողովը այս տարի զուարթեցաւ
Մայիս 1-2-3 օրերուն Ուղթըրթաւուն, Մէս-ի Ս. Յակոբ
Հայց. Եկեղեցւոյ հիւրընկալութեամբ: Եկեղեցւոյս Պատգամաւորները, Խորհուրդոյս
Ատենապետը, Հոգեւոր Հովիւը ներկայ եղան ժողովներուն ամենայն կանոնաւորու-
թեամբ եւ բերին իրենց դրական մասնակցութիւնը:

ՁԵՆՆԱՐԿՆԵՐ.- Ապրիլեան Եղեռնի Յուշահանդէս:- Ապրիլ 24-ը այս տարի եւս նշուեցաւ
եկեղեցւոյս հոգեւոր հովիւ Հայր Պարէտի բժախնդիր հսկողութեամբ
եւ պատրաստուած յայտագիրով կատարուեցաւ ապաւորիչ մոմավառ թափօր, եկեղեցական
յուզիչ արարողութիւն եւ մեծաթիւ ներկաներու մասնակցութեամբ՝ խմբային արտա-
սանութիւն ու երգ:

Տէպիւթանթներու Պարահանդէս.- Այս առթիւ կազմած էինք յատուկ յանձնախումբ մը
Պրն. Լեւոն Գործեանի ատենապետութեամբ. Պրն. Գործեանի անակնկալ անհանգստու-
թեան պատճառաւ, Խորհուրդս գիտակից այս ձեռնարկին, ատենապետութեամբ Պրն. Արթօ
Պասամեանի եւ բացառիկ աշխատութեամբ Խորհուրդոյս անխոնջ անդամ՝ Պրն. Գրիգոր
Տիգրանեանի եւ շարք մը անդամ-անդամուհիներու ունեցանք մեր նախատեսած յաջողու-
թիւնը շնորհիւ եկեղեցապէր համայնքիս, որոնց բոլորին կը յայտնենք մեր շնոր-
հակալութիւնները:

Տոբթ. Ա. Կէօնճեանի Վեհ. Հայրապետին կողմէ պարզեւատրման հանդիսութիւն.-
Խորհուրդոյս վիճակեցաւ վշառիթ դէպքի մը տխուր վերջաւորութեան ականատես
ըլլալ. ուրախ ենք որ նոյնպէս մեր շրջանին կը զուգադիպի Գանատայի մէջ
առաջին անգամ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի կողմէ պար-
զեւատրուած անձնաւորութեան մը ի պատիւ Եկեղեցւոյ մէջ կազմակերպել հանդիսու-
թիւն մը: Մենք պէտք էր կազմակերպէինք քանի որ Վեհ. Հայրապետը գոհացում
տուած էր մեր փափաքին, ձեր փափաքին: Նախագահեց ու շքանշանը յանձնեց Թեմիս
հայրախնամ Առաջնորդ Սրբազան Հայրը, ի ներկայութեան մեծաթիւ հեռակեաց հիւ-
րերու եւ սրահը ամբողջութեամբ լեցնող ազգայիններու: Ձեռնարկը անցաւ խիստ տպա-
ւորիչ ու յաջող:

ՀԱՇՈՒԱԿԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ.- Խորհուրդս իր խորին շնորհակալութիւնները կը
յայտնէ Պրն. Միսաք Կուտսուզեանին, որ հակառակ
իր անցուցած վիրաբուժական գործողութեան, այս տարի եւս սիրայօժար կերպով կա-
տարեց հսկողութիւնը հաշուակալական հարցերուն եւ տեղեկատուութեանց պատրաս-
տութեան:

Շնորհակալութիւն մեր շրջանաւարտ պաշտօնակիցներուն եւ մասնաւոր շնորհակալու-
թիւն եկեղեցւոյս մարմիններու անխտիր ըլլոր անդամներուն, ինչպէս նաեւ քոյր
կազմակերպութիւններու եւ մարմիններու վարիչներուն եւ ազգայիններուն, որոնք
իրենց անշահախնդիր, ողջամիտ ու անձնուէր գործակցութեամբ քաջալերեցին մեզ եւ
կարողացանք առաջնորդել նաևը խաղաղ նաւահանգիստ:

ԱՐԹՕ ՊԱՍՄԱՃԵԱՆ
Ատենապետ

ԺԻՐԱՅՐ ԱՅՎԱՏԵԱՆ
Ատենադպիր

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ԲՈՒՐԱՍՏԱՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻ
1 9 8 1 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ ԲՈՒՐԱՍՏԱՆ պարբերաթերթի Յանձնախումբը անցեալ Մայիսին վերակազմուեցաւ: Նորակազմ Յանձնախումբի անդամներն են, Պրնք. Պերժ ֆազլեան, Գրիգոր Գըլճեան, Մկրտիչ Ղազարեան, Օննիկ Գալուստեան, Ժիրայր Այվատեան, Տոթթ. Յարուլթիւն Արզումանեան եւ Վահէ Քէթիլի: Յանձնախումբը որոշեց, որ պատասխանատու խմբագիրը ըլլայ Պրն. Պերժ ֆազլեան: Ժխական Խորհուրդի հետ իր առաջին հանդիպման ընթացքին, նորակազմ յանձնախումբի թելադրութեամբ որոշուեցաւ որ ԲՈՒՐԱՍՏԱՆը հրատարակուի երկամսեայ, սակայն, էջերու կրկին թիւով եւ բովանդակութիւնը ճոխանայ զուտ եկեղեցական-մշակութային-ազգային նիւթերով, պահելով հանդերձ իր դերը եկեղեցւոյս զործունէութիւններուն լրատու որպէս միջոց եւ կապ՝ եկեղեցւոյս անդամներուն միջեւ:

Ուրախութեամբ կը նշենք, որ բազմաթիւ անձերու կողմէ գնահատական արտայայտութիւններով դիմաւորուեցաւ ԲՈՒՐԱՍՏԱՆի նոր ներկայացումը: Առաջնորդ Սրբազան Հօր գնահատանքի գիրը, որ հրատարակուեցաւ ԲՈՒՐԱՍՏԱՆի մէջ, մեզի խրախուսեց որ աւելի խանդավառութեամբ շարունակենք այս յոյժ կարեւոր աշխատանքը:

Յանձնախումբս մեծ հետաքրքրութեամբ կը սպասէ ստանալ մեր անդամներէն իրենց թելադրութիւնները, քննադատութիւնները եւ աշխատակցութիւնը:

Ընորհակալութեան մասնաւոր խօսք ունինք Թէքէեան Մշակ. Միութեան, որ այս տարի եւս սիրայօժար կերպով տրամադրեց դարձատիպ մեքենագրութեան իր սարքաւորումները առանց որեւէ նիւթական փոխարժէքի: Նոյնպէս շնորհակալութիւն Պրն. Վահէ Քէթիլի որ խղճմտօրէն կը կատարէ թերթին ամբողջ մեքենագրութիւնը: Վերջապէս շնորհակալութիւն մեր բոլոր աշխատակիցներուն եւ ծխական Խորհուրդին, Յանձնախումբիս հանդէպ ցոյց տուած զօրավիզին համար:

ՊԵՐՃ ՖԱԶԼԵԱՆ
Պատասխանատու Խմբագիր

Շաբաթօրեայ վարժարանի 1981-82 տարեշրջանի վերամուտը տեղի ունեցաւ 12 Սեպտ. 1981 Շաբաթ առաւօտ, Ալեք Մանուկեան վարժարանին մէջ: Բացման հանդիսութիւնը կատարուեցաւ կրօնական սյուշած արարողութեամբ՝ Տ. Բարթող Ա. Զհնյ. Խրքածեանի եւ մասնակցութեամբ Բարշ. Օսնիկ Սրկ. Գալուստեանի: Ներկայ էին ծխական ծորհուրդոյ, Խնամակալ Մարմնի անդամներ, տնօրէնութիւն եւ ուսուցչական կազմ:

Խնամակալ Մարմինը որ կը հոգայ վարժարանի նիւթական եւ քարոյական կարիքները, այս շրջանին կը բաղկանայ հետեւեալ անդամներէ.

Տիկ. Էլտա Աքքիպրիթեան՝ առնապետ, Տղթ. Յարութիւն Հսէկիւլեան՝ փոխ-առնապետ, Պրն. Դերենիկ Սայեան՝ առնադպիր, Պրն. Վահէ Զերէսթէճեան՝ զանձապահ, եւ խորհրդականներ՝ Տիկ. Արշալոյս Մէնէնտեան, Տիկ. Լնգինէ Շաքարեան, Օր. Սիլվա Տէմիրճեան եւ Պրն. Վահան Շաքարեան: Պրն. Ժիրայր Այվատեան՝ ներկայացուցիչ ծխական խորհուրդոյ:

Վարժարանի տնօրէնութեան պաշտօնը ձեռնհասօրէն կը վարէ Բարշ. Օսնիկ Սրկ. Գալուստեան, առաջնորդելով հետեւեալ նուիրեալ ուսուցիչները.

Տիկ. Անահիտ Չաքրճեան՝ Ը. կարգ, Օր. Անի Հսէկիւլեան՝ Է. կարգ, Պրն. Յակոբ Գըլըճեան՝ Ե. կարգ եւ պարուսոյց, Տիկ. Շնորհիկ Գրիգորեան՝ Դ. կարգ, Օր. Նինա ծերունեան՝ Գ. կարգ, Տիկ. Սիլվա Չիլինկիրեան՝ Բ. կարգ, Տիկ. Հիլտա Կէրկէրեան՝ Ա. կարգ եւ մանկապարտէզ, Տիկ. Անահիտ Չավուշեան՝ փոքրերու պարուսոյց եւ Տիկ. Ազգանոյշ Փստրճեան՝ օգնական մանկապարտէզին:

1981-82 տարեշրջանի աշակերտութեան թիւն է՝ 85: Վարժարանէն ներս կը գործադրուի Առաջնորդարանի Կրթական Բաժնի միօրեայ դպրոցներու յատուկ ծրագիրները: Կը դասաւանդուին մայրենի լեզու, Ազգային պատմութիւն, աշխարհագրութիւն կրօնագիտութիւն, ինչպէս նաեւ հայկական երգ ու պար: Խնամակալ Մարմինը այս տարի ստանձնած է վարժարանի նիւթական հարցերու ամբողջական պատասխանատուութիւնը: Ալեք Մանուկեան վարժարանին կը վճարուի որոշ վարձք՝ դասարաններու, սրահներու, ինչպէս նաեւ օթօպիւսներու գործածութեան համար: Կրթական որոշ օժանդակութիւն կը ստացուի նահանգային եւ Դաշնակցային կառավարութիւններու կողմէ, որոնք հազիւ կրնան հաւասարակշռել տարեկան ծախքը:

ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ՝ 1981-ի Փետրուարէն

28 Փետրուար 1981-ին տեղի ունեցաւ Խնամակալութեան "Բուն Բարեկենդան" ի պարահանդէսը, Եկեղեցւոյ Մարի Մանուկեան Սրահին մէջ: Կազմակերպիչ Յանձ.ի առնապետութիւնը կատարեց՝ Պրն. Գէորգ Փելթէքեան: Այդ առիթով 2500 վիճակահանութեան տոմսեր վաճառուեցան: Այս աննախընթաց ձեռնարկը վարժարանիս ապահովեց 5000 տոլարի շօշափելի հասոյթ մը: Կարիւլ 18-ին, Զատիկուան առթիւ, աշակերտութիւնը Ս. Հաղորդութիւն ստացաւ ձեռամբ Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի, ապա տեղի ունեցաւ հիւրասիրութիւն Խնամակալ Մարմնի կողմէ: Յունիս 13-ին վարժարանիս տարեվերջի հանդէսը տեղի ունեցաւ Մարի Մանուկեան Սրահին մէջ: Ներկայ եղան ծնողներ, զանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, նիւ Եորթէն Կրթական Տեսուչ՝ Օր. Սիլվա Տէր Ստեփանեան, ինչպէս նաեւ այդ օրերուն քաղաքս գտնուող ծանօթ երաժիշտ՝ Պրն. Համբարձում Պէրպէրեան: Հանդիսութեան կը նախագահէր՝ Տ. Բարթող Ա. Զհնյ. Խրքածեան: Վերջաւորութեան կատարուեցաւ վկայականներու եւ նուէրներու բաշխումը:

Երկու ամսուան արձակուրդէ ետք, ծխական Խորհուրդոյ հրաւերով Խնամակալ Մարմինը Օգոստոս 4-ին վերակազմուեցաւ առաւել նոր անդամներով: Ծխական Խորհուրդոյ որոշումով եւ առաջարկով, Խնամակալ Մարմինը, այս տարի, կը ծրագրէ պատշաճ շուքով տօնելու Վարժարանիս 25-ամեայ Արծաթեայ Յոբելեանը: Այս առիթով, եկեղեցւոյ պատկան յանձնախումբերու ներկայացուցիչներով կազմուած է Կարգադիր Յանձնախումբ մը, որուն ատենապետութիւնը ստանձնած է դիւանապետ Պրն. Վահէ Բէթլի: Հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Մարտ 27-28 շաբաթավերջին Ալեք Մանուկեան Վարժարանի Կէօճեան Սրահին մէջ, Իովանաւորութեամբ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի: Այս առիթիւ, Խնամակալ Մարմինը ձեռնարկած է Կիրակնօրեայ երգի ու պարի դասընթացներ, որոնք Հոկտեմբեր 4-էն ի վեր տեղի կ'ունենան Մարի Մանուկեան Սրահին մէջ ամենայն կանոնաւորութեամբ, դեկավարութեամբ՝ Տիկ. Սելմա Բէթլիկեանի եւ Պրն. Յակոբ Գըլըճեանի, դաշնակի ընկերակցութեամբ՝ Օր. Անի Էսէկիւլեանի եւ Պրն. Արա Թօշիկեանի:

Դեկտեմբեր 14-ին, երեկոյեան ժամը 9-11, տեղի ունեցաւ ծնողական հաւաքոյթ: Ներկայ եղան Խնամակալութիւն, Ուսուցչաց Կազմ եւ Տնօրէնութիւն: Ծնողք ջատագովեցին տարուած աշխատանքները յօգուտ մեր մատաղ սերունդին: Հաւաքոյթին նախագահեց եկեղեցւոյս Հովիւը, որուն ընթացքին կատարուեցաւ հիւրասիրութիւն: Դեկտեմբեր 19-ին Ալեք Մանուկեան Վարժարանին մէջ տեղի ունեցաւ Տօնածառի շուքը Իանդէս մը: Կոկիկ ու զոհացուցիչ հանդիսութենէն ետք կատարուեցաւ նուէրներու բաշխում ու հիւրասիրութիւն: Վարժարանը երկու շաբաթ փակ մնաց տօնական օրերու առիթով: Յունուար 9-ին, աշակերտութիւնը Ս. Ծննդեան առիթիւ ստացաւ Ս. Հաղորդութիւն: Նոյն օրը բացառիկ համոյթով ընդունեցինք այցելութիւնը հայրենի տաղանդաւոր արուեստագէտ եւ Հոգեւոր Խորհուրդի Անդամ, Պրն. Գրիգոր Խանջեանի, որ բացառիկ յուզումով ներկայ եղաւ աւանդական մոմավառութեան, Ս. Հաղորդութեան արարողութեան եւ այս առիթով մեծայարգ հիւրը գեղեցիկ ելոյթով մը յայտնեց իր զգացումները: Յունուար 16-ին, Վարժարան այցելեց Թեմիս հայրախնամ Առաջնորդ Սրբազան Հայրը, իրեն կ'ընկերանային եկեղեցւոյ Հովիւը ու ծխական Խորհուրդոյ անդամներ: Աշակերտութիւնը իրենց տնօրէնին եւ ուսուցիչներուն առաջնորդութեամբ հրամցուց գեղարուեստական խնամեալ յայտագիր մը: Սրբազան Հայրը իր զոհունակութիւնը յայտնեց տղոց հասկնալի ու համեմալի մտերմիկ խօսքերով:

Խնամակալութիւնս, այս տարի, որոշած է Բուն Բարեկենդանի ձեռնարկը կատարել Փետրուար 20-ին: Այս առիթիւ Խնամակալ Մարմնի հրաւերին ընդառաջելով ՀՔԸՄ-ի, ԹՄՄ-ի եւ Պարոյր Սեւակ-ի երիտասարդութիւնը որոշեց ձեռնարկ մը սարքել եւ որուն հասոյթը տրամադրել Վարժարանիս: Սոյն երեկոյթի պատասխանատուութիւնը սիրով ընդունած է Պրն. Գ. Փելթէքեան: Այս առիթով կրկին 2500 վիճակահանութեան տոմսեր հրապարակ հանուած են, որուն արդիւնքները յայտնի պիտի ըլլան սոյն երեկոյթին ընթացքին:

Խնամակալ Մարմինս, վերջացնելէ առաջ իր տեղեկատուութիւնը, պարտք կը զգայ շնորհակալութիւն յայտնել նախկին Իովիւ, Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի եւ ներկայ Հովիւ՝ Արժ. Տ. Բարթող Ա. Բնյ. Խրթածեանի իրենց անվերապահ զօրավիգին համար: Շնորհակալութիւն պատուարժան ծխական Խորհուրդին եւ պատկան մարմիններու աջակցութեան, տնօրէնութեան, Ուսուցչաց կազմին եւ վերջապէս սիրելի ծնողաց համագործակցութեան, նուիրումին ու զոհաբերումին, որոնց բոլորին շնորհիւ կարելի կ'ըլլայ մեր Աստուածահամոյ աշխատանքը տանիլ ի փառս հայ վարժարանին եւ աշակերտութեան:

ԷԼՏԱ ԱԲԵՒՊՐԻԹԵԱՆ
Ատենապետ
ԴԵՐԵՆԻԿ ՍԱՅԵԱՆ
Ատենադպիր

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ
1 9 8 1 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Եկեղեցւոյս այս տարեշրջանի Տիկնանց Միութիւնը իր տարեկան ընդհանուր անդամական ժողովը չունեցաւ եւ Հովիւին եւ ծխական Խորհուրդոյ որոշումով մնաց նոյնը.

Տիկ. Հայկուհի Կուտուզեան՝ ատենապետ, Տիկ. Շուշան Բրուտեան՝ փոխ-ատենապետ, Տիկ. Բեբեկա Թաշճեան՝ ատենաղախիր, Տիկ. Ալիս Մարկոսեան՝ փոխ-ատենաղախիր, Օր. Մերսէտէս Սարաֆեան՝ գանձապահ, Օր. Ալիս Պետրոսեան՝ հաշուապահ, խորհրդական անդամներ՝ Տիկ. Բոզ Տիգրանեան, Տիկ. Վերոնիկ Ճիհանեան, Տիկ. Հայկանոյշ Կէրիթեան: Տիկ. Գոհար Տէր Գէորգեան ամուսնոյն անհանգստութեան պատճառաւ ակամայ Իեռացաւ կազմէն: Իսկ Տիկ. Անահիտ Էվրէնսէլ հրաժարեցաւ անորոշ պատճառով:

Տիկնանց Միութիւնը իր բոլոր կարելին ըրաւ այս տարի եւս օգտակար ըլլալու համար Եկեղեցւոյս, Իտեւեալ աշխատանքները իրագործելով.

ՊՏՈՅՏՆԵՐ.— Այս շրջանին պտոյտները սկսան "Շուկրո Փարթի" ով, յետոյ ունեցանք երկու զբօսապտոյտներ, որոնք ղէպի էսթէրէլ եւ տարեկան դաշտագնացութիւն՝ մասնակցութեամբ ծխական Խորհուրդին:

ՃԱՇԵՐ.— Ունեցանք "Միջինքի ճաշ" ը՝ Սուրբերու տօնին առիթով, յետոյ Զատիկուան ճաշկերոյթը, Ապրիլեան Եղեռնի հանդիսութիւնը եւ սարքուած մատաղի սեղանը:

ՀԱՒԱԲՈՅԹՆԵՐ.— Զանազինք միշտ կապը պահել մեր բազմանդամ անդամուհիներուն միջեւ եւ զանազան առիթներով սարքեցինք թէյասեղաններ միշտ ստեղծուած ջերմ մթնոլորտի մէջ:

ԶԱՏԿՈՒԱՆ ՀԱԽԻԹՅՆԵՐՈՒ ԱՐՇԱԻ.— Նախորդ տարիներուն նման, այս տարի եւս, պատրաստուեցան գունաւոր հաւկիթներու եւ տուրմերու կողովիկներ. , ինչպէս նաեւ չէօրէքներու եւ զանազան անուշեղէններու ապսպրանքներ, որոնք պակուեցան փայլուն յաջողութեամբ: Հոս անգամ մը եւս պարտք կը զգանք մեր խորին շնորհակալութիւնները յայտնելու Պրն. Միսաք Կուտուզեանին որ մեծապէս կը բերէ իր անգնահատելի բաժինը հաւկիթներու աշխատութեանց մէջ:

ՈՂՋԵՐԹԻ ԺԱՇԿԵՐՈՅԹ.— Եկեղեցւոյս հոգեւոր հովիւ՝ Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի նոր պաշտօնով քաղաքէս փոխադրուելուն առիթով սարքուեցաւ ողջերթի պաշտօնական ճաշկերոյթ մը:

ՏԱՐԵԿԱՆ ՏՕՆԱՎԱՃԱՌԸ.— Այս բոլորին յաջորդեց մեր աւանդական դարձած եւ գլխաւոր ձեռնարկը նկատուած տարեկան տօնավաճառը որ տեղի ունեցաւ նոյեմբեր 21-22 -ի շաբաթավերջին: Այս տարի կազմակերպուեցաւ նաեւ վիճակահանութեան ձեռնարկ մը զուգահեռ մեր պագարին, որուն առաւել հասոյթը մօտաւորապէս 1000 տուար եկաւ աւելնալ տօնավաճառի առթիւ ապահովուած շօշափելի գումարին վրայ: Ենորհիւ Տիկնանցի անդամուհիներուն եւ վարչութեանս կազմին եւ այլ անձերու կողմէ կատարուած զոհողութիւններու շնորհիւ ունեցանք ձեռային աշխատանքներու եւ ասեղնագործութիւններու մոխր եւ պէսպիսուն տեսակներ, ինչպէս նաեւ ուտեստեղէններու լայնածաւալ բաժին մը, որ մեծապէս կ, օգնէ ձեռք բերուած յաջողութեան: Այս տարեկան ձեռնարկը խլեց անցաւ իր նախորդները ապահովելով աւելի քան 5000 տուարի գումար շահ:

Տիկնանց Միութեան Վարչութիւնս այս շրջանին տարուած յաջողութիւններուն առնթեր, կը փափաքի յայտնել իր շնորհակալութիւնները անխտիր իր բոլոր անդամներուն եւ համակիրներուն, որոնք ամէն առիթով թիկունք կանգնեցան եւ զօրավիգ եղան իրենց անգին մասնակցութիւններով:
ՀԱՅԿՈՒՀԻ ԿՈՒՏՍՈՒԶԵԱՆ՝ ատենապետ , **ԲԵԲԵԿԱ ԹԱՇՃԵԱՆ՝** ատենաղախիր

Կոմիտաս Դպրաց Դասուկ Տարեկան Ընդհանուր Ժողովը գումարուեցաւ 31 Մարտ 1981-ին, նախագահութեամբ Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի Դպրաց Դասի սրահին մէջ: Նորրոնտիր վարչութիւնը իր անդրանիկ նիստը գումարեց 5 Ապրիլ 1981-ին, նախագահութեամբ Գոգեւոր հիվիւին Վաչէ Յովսէփեան Սրահին մէջ եւ կազմեց իր դիւանը հետեւեալ կերպով. Պրն. Գէորգ Փելթեքեան՝ ատենապետ, Պրն. Աւետիս Պասամեան՝ փոխ-ատենապետ, Տիկ. Անգինէ Շաքարեան՝ ատենադպիր, Պրն. Արա Կէրիքեան՝ գանձապահ, Տիկ. Անի Քէրէսթէմեան՝ հաղորդակցութեան պատասխանատու, Օր. Անի Հսէկիւլեան՝ արտաքին յարաբերութիւններ, Պրն. Զօհրապ Զավուշեան՝ արտաքին յարաբերութիւններ:

ԴՊՐԱՑ ԴԱՍՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ:

30 Մայիս 1981-ին, Տիկ. Մարգրիտ Զաւգաւաթմեանի ղեկավարութեամբ երգչախումբը Եկեղեցւոյս մէջ ներկայացուց իր ստ յաջող համերգ մը եկեղեցական եւ աշխարհիկ երգերու նուիրուած ճոխ յայտագիրով մը, եւ արժանացաւ ներկաներու անվերապահ գնահատանքին: Համերգի ակարտին ներկաները Գարիպեան սրահին մէջ հիւրասիրուեցաւ երգչախումբիս անդամ-անդամուհիներուն կողմէ:

21 Յունիս 1981-ին, Եկեղեցւոյ Մարի Մանուկեան Սրահին մէջ, Դպրաց Դասը ողջերթի ծաշկերոյթ մը տուաւ Տիկ. Մարգրիտ Զաւգաւաթմեանի Լոս Ալճեւրս մեկնումին առթիւ, ի ներկայութեան հրաւիրեալներու եւ հարազատներու:

6 Դեկտեմբեր 1981-ին, Կիրակի օր, կատարուեցաւ հոգեհանգստեան յատուկ պաշտօն Դասէս անդարձ բաժնուող անդամներուն ի յիշատակ, որուն յաջորդեց Դասուկ հիմնարկութեան 22-րդ տարեդարձի հանդիսութիւնները՝ Մարի Մանուկեան Սրահին մէջ:

Կոմիտաս Դպրաց Դասը նաեւ իր օժանդակութիւնը բերած է հետեւեալ ձեռնարկներուն.

- 24 Ապրիլի նահատակներու հանդիսութեանց.
- Հ.Բ.Ը.Միութեան 75-ամեակի տօնակատարութեանց.
- Հայաստանի 60-ամեակի տօնակատարութեանց.
- Պարոյր Սեւակի մահուան 10-րդ տարելիցի հանդիսութեանց.
- 10 Յունուար 1982-ին Օթաուայի մէջ կատարուած Ս. Ծննդեան Ս. Պատարագի մատուցման:

Մեր պարտամանաչ անդամները տեւականօրէն հերթաբար ներկայ եղած են տարւոյն բոլոր կիրակիներուն մատուցուած Ս. Պատարագներու բազմաձայն երգեցողութեանց, ղեկավարութեամբ՝ Պրն. Արթօ Միւհիէնտիսեանի եւ փոխ ղարապետութեամբ՝ Պրն. Վահան Շաքարեանի:

Երգչախումբիս փորձերը ամենայն կանոնաւորութեամբ կը կատարուին 2որեքշաբթի երեկոները: Եկեղեցական երգերուն ղեկավարութեամբ՝ Պրն. Արթօ Միւհիէնտիսեանի, իսկ աշխարհիկ երգերու, ղեկավարութեամբ՝ Տիկ. Սելմա Քէքիկեանի:

Դպրաց Դասուկ Վարչութիւնը սրտանց շնորհակալութիւններ կը յայտնէ խումբի բոլոր անդամ-անդամուհիներուն՝ իրենց ցուցաբերած զոհողութեանց եւ պարտամանաչութեանց: Մասնաւոր շնորհակալութիւններ, Պրն. Արա Թօշիկեանի, որ քաղաքս ժամանումէն ասդին տեւականօրէն կը բերէ իր արժէքաւոր մասնակցութիւնը, օգտակար հանդիսանալով երգչախումբին երգեհոնի եւ դաշնակի նուագածութեամբ եւ հմուտ խմբավարութեամբ:

Կոմիտաս Դպրաց Դաս Երգչախումբը ներկայիս կը գործի Կոմիտասի փոխ կառավարչութեան նիստերում: Դպրաց Դասի անդամները կը հաճախեն Կոմիտասի սրահը: Կոմիտասի անդամները կը հաճախեն Կոմիտասի սրահը: Կոմիտասի անդամները կը հաճախեն Կոմիտասի սրահը:

Կոմիտաս Դպրաց Դաս Երգչախումբը ներկայիս կը գործի Կոմիտասի փոխ կառավարչութեան նիստերում: Դպրաց Դասի անդամները կը հաճախեն Կոմիտասի սրահը: Կոմիտասի անդամները կը հաճախեն Կոմիտասի սրահը:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
 Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ
 ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՉՆԱՌՈՒՄԲԻ
 1981-ի ՏԱՐԵՇՐՁԱՆ

1981 տարեշրջանին, ինչպէս նախորդին, Յանձնախումբս կը բաղկանար հետեւեալ գործօն անդամներէն.

Պրն. Ն. Ուզունեան՝ Ատենապետ, Պրն. Կ. Շամլեան՝ Փոխ-ատենապետ, Տիկ. Ա. Արթինեան՝ Ատենաղախ, Պրն. Ա. Գասպարեան՝ Հաշուակալ, Խորհրդականներ՝ Տիկնք. Ա. Շիշմանեան, Ժ. Ստեփանեան, Պրնք. Ա. Ստեփանեան, Մ. Ղազարեան:

Այս տարեշրջանին Յանձնախումբս ունեցաւ հետեւեալ գործունէութիւնները.

1. 7 եւ 8 Մարտ 1981-ին Յանձնախումբս տօնեց Հայաստանի ՍՍ Հանրապետութեան 60-ամեակը, կազմակերպելով ինամեալ ցուցահանդէս մը, որ կը պարզէր հայրենիքին ու 60 տարիներու ընթացքին հոն կատարուած նուաճումներուն մանրանկարը: Ցուցահանդէսը կը բաղկանար մեծադիր նկարներէ, քարտէսներէ, ձեռարուեստի ու տպագրական արուեստի նմոյշներէ, տիպիոգրամաներէ, շարժանկարային ցուցադրութիւնէ եւ երաժշտական ունկնդրումներէ: Երկու լման օր տեւող այս ցուցահանդէսը հիացում եւ հպարտութիւն առթեց մեծ թիւով այցելուներու:

2. 27 Սեպտեմբեր 1981-ին Յանձնախումբս, գործակցութեամբը Մոնրէալի Պարոյր Սեւակ Մշակութային Միութեան, կազմակերպեց մշակութային-գեղարուեստական երեկոյթ մը, նուիրուած մեծ քանաստեղծ Պարոյր Սեւակի կեանքին ու գործին, ոգեկոչելու համար իր մահուան տասնամեակը:

3. 31 Հոկտեմբեր եւ 1 Նոյեմբեր 1981-ին Յանձնախումբս ցուցադրեց Ուիլիամ Սարոյանի "Մարդկային Կատակերգութիւնը" անուն հանրածանօթ վէպին շարժանկարը, ոգեկոչելու համար մեծահամբաւ գրողին վաստակը:

4. 29 Նոյեմբեր 1981-ին տեղի ունեցաւ Յանձնախումբիս՝ Պոլսահայ Միութեան հետ գործակցաբար կազմակերպած համերգը, Ութրոմոն Հայսթուլի սրահին մէջ, ուր հանդէս եկան Ալիս Մանուկեան եւ Դաւիթ Վարժապետեան արուեստագէտները:

5. ինչպէս ամէն տարի, այս տարի եւս շարունակուեցաւ զիրքերու վաճառքը: Հոս պարտք կը զգանք շեշտելու, թէ այս գործը թէեւ հրապարակային ելոյթ մը չի կազմեր, այսուհանդերձ կը ծառայէ հանրութեան եւ կը պահանջէ նոյնքան լուրջ ու կազմակերպեալ աշխատանք, զորս Յանձնախումբս տարիներէ ի վեր կը տանի, խորապէս համոզուած ըլլալով անոր նուիրականութեանը:

Ասիկա վերջին տեղեկատուութիւնն է Մամիկոնեան Մշակութային Յանձնախումբին, տրուած ըլլալով, որ Յանձնախումբս իր լիակատար կազմովը կը հրաժարի ներկայ ընտրաշրջանի վերջաւորութեան:

Ն. Ուզունեան՝ Ատենապետ

Ա. Արթինեան՝ Ատենաղախ

ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ՀԱՇՈՒԹՔՆՆԻՉ ՄԱՐՄՆԻ
1 9 8 1 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Քննեցինք Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ ծխական խորհուրդի մուտքի եւ ելքի, ինչպէս նաեւ հաշուեկշիռի ցուցակները՝ 1 Յունուար 1981-էն 31 Դեկտեմբեր 1981 շրջանի համար:

Մեր քննութիւնները եղան ընդհանրապէս ընդունուած հաշուեքննական մակարդակի վրայ, եւ պարփակեցին հաշուական տոմարներու եւ փաստաթուղթերու վաւերական ձեւի մշղման, որ հարկ տեսանք զանազան պայմաններու տակ:

Ըստ մեր կարծիքին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ ծխական խորհուրդի ցոյց տուած մուտքի եւ ելքի հերթական տեղեկատուութիւնները մշտրիտ կերպով կը ներկայացնեն իր 1 9 8 1 տարեշրջանի գործունէութիւնը եւ իր վիճակը 31 Դեկտեմբեր 1981 տարուան, նախորդ տարիներու որդեգրած հաշուակալական սկզբունքներու հիման վրայ:

Հաշուեքննիչ Մարմին:

ԱՆԴՐԱՆԻԿ ՉԱՏՐՃԵԱՆ

ՀՐԱՉ ԹՈՐԻԿԵԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԾՏՈՒՈՒԹԻՒՆ
ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ
1 9 8 1 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>31.12.81</u>	<u>1981 Պ հ հ Տ ճ է</u>	<u>31.12.80</u>
Եկեղեցւոյ մոմավառութենէ եւ պնակէ	\$13,703	14,000	12,434
Եկեղեցւոյ կալուածէն վարձք	6,025	6,500	5,980
"Բուրաստան" ամսաթերթէ	3,330	3,500	2,704
Շաբաթօրեայ վարժարանէ	11,779	8,000	9,309
Խորհրդակատարութիւններէ	7,455	9,000	7,170
Անդամատուրքերէ	12,955	16,000	16,017
Նուիրատուութիւններէ	22,470	26,000	23,912
Իւղազին նուիրատուութիւններէ	6,834	7,000	6,834
Պարտքի Շիջման նուիրատուութիւնէ	2,110	---	346
Նորոգութեան ֆոնտի նուիրատ.	2,528	5,000	9,450
Պատի օրացոյցէ	---	---	250
Դրամատան տոկոսէ	2,526	5,000	4,836
Գրասենեակի մուտքերէ	502	700	679
2 Ե Ռ Ն Ա Ր Կ Ն Ե Ր Է			
Շաբաթօրեայի պարանցիկէ	5,516	4,000	2,316
Զատկուան հաւկիթներէ	1,821	2,000	1,751
Տէպիւթ. նախկին տարուան	1,635	3,500	4,604
Տէպիւթ. պարահանդէսէ	8,865	10,000	10,675
10-ամեակի ձեռնարկներէ	---	4,600	---
Ապրիլ 24-ի ձեռնարկէ	690	---	---
Զանազանքէ	460	200	---
Մ Ա Ր Մ Ի Ն Ն Ե Ր Է			
Տիկնանց Միութենէ	7,146	9,000	8,800
Մամիկոնեան Մշակ. Յանձ.-է	600	500	500
Դպրաց Դասէ	2,500	3,000	3,000
Երիտասարդացէ	---	---	572
	<u>\$121,450</u>	<u>\$137,500</u>	<u>\$132,139</u>

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԾՏՈՒՈՒԹԻՒՆ
ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ
1 9 8 1 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

<u>Ե Լ Ք</u>	<u>31.12.81</u>	<u>1981 ՊհհՏՃԷ</u>	<u>31.12.80</u>
Պաշտոնէութեան	\$34,317	38,000	34,311
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԱԽՍԵՐՈՒ			
Հոգեւորականաց յատկացումներու	6,237	7,000	7,251
Ընթացիկ ծախսերու	6,592	7,000	6,962
Կալուածի պահպանութեան	26,347	22,000	22,082
Գլխաւոր նորոգութեանց	9,363	5,000	15,395
"Բուրաստան" պաշտօնաթերթի	3,241	4,000	3,649
Շարաթօրեայ վարժարանի	17,322	18,000	17,948
Գրասենեակի ծախսերու	5,666	6,000	6,161
Ձանազան գործունէութեանց	---	500	---
Առաջնորդարանի տուրք	24,020	30,000	31,386
Շիջման Յանձնախումբի փոխանցում.	4,400	---	4,700
	<u>\$137,505</u>	<u>\$137,500</u>	<u>\$149,845</u>
Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի	16,055	---	17,706
Պատրաստ գումար Յունուար 1-ին	39,070	39,070	56,776
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	23,015	39,070	39,070

Մ Ո Ւ Տ Ք	ՆԱԽԱՀԱՇԻՒ ՆԱԽԱՀԱՇԻՒ			
	1980	1981	1981-	1982
Եկեղեցւոյ պնակէ	\$12,434	13,703	14,000	14,500
Եկեղեց. կալուածէ վարձք . . .	5,980	6,025	6,500	6,500
ԲՈՒՐԱՍՏԱՆ պաշտօնաթերթէ . . .	2,704	3,330	3,500	3,500
Շաբաթօրեայ վարժարանէ	9,309	11,779	8,000	12,000
Խորհրդակատարու թիւններէ . . .	7,170	7,455	9,000	9,000
Անդամատուրքերէ	16,017	12,955	16,000	14,000
Նուիրատուութիւններէ	23,912	22,470	26,000	24,000
Իւղազին նուիրատուութիւն . .	6,834	6,834	7,000	7,000
Պարտքի Շիջման	346	2,110	---	---
Նորոգութեան ֆոնտի նուիրտ. .	9,450	2,528	5,000	4,000
Պատի օրացոյցէ	250	---	---	---
Դրամատան տոկոսէ	4,836	2,526	5,000	2,000
Գրասենեակի մուտք	679	502	700	600
Ձեռնարկներէ .-				
Շաբաթօրեայի պարանցիկ.	2,316	5,516	4,000	7,000
Զատիկուան հաւկիթներ	1,751	1,821	2,000	2,000
Տէպիւթանթներու պարանցիկ. .	4,604	1,635	3,500	3,000
Տէպիւթանթներու պարանցիկ. .	10,675	8,865	10,000	8,000
10-ամեակի ձեռնարկ	---	---	4,600	5,000
Ապրիլեան Եղեռն	---	690	---	200
Զանազանք	---	460	200	200
ՄԱՐՄԻՆՆԵՐԷ .-				
Տիկնանց	8,800	7,146	9,000	8,000
Դպրաց Դաս	3,000	2,500	3,000	3,000
Մամիկոնեան Մշակ.	500	600	500	1,500
Երիտասարդաց	572	---	---	---
Հոգատար Մարմին	---	---	---	5,000
	<u>\$132,139</u>	<u>\$121,450</u>	<u>\$137,500</u>	<u>\$140,000</u>

ՆԱԽԱՀԱՇԻՒ
ԺՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ
1 9 8 2 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

<u>Ե Լ Ք</u>	<u>1980</u>	<u>1981</u>	<u>ՆԱԽԱՀԱՇԻՒ 1981.</u>	<u>ՆԱԽԱՀԱՇԻՒ 1982</u>
Պաշտօնէութեան.....	\$34,311	34,317	38,000	36,000
Եզերճեցիմ ծախսերու.-				
Հոգեւորականաց յատկաց. .	7,251	6,237	7,000	7,000
Ընթացիկ ծախսեր	6,962	6,592	7,000	6,000
Կալուածի պահպանութեան ...	22,082	26,347	22,000	28,000
Նորոգութեանց	15,395	9,363	5,000	10,000
ԲՈՒՐԱՍՏԱՆ -ի	3,649	3,241	4,000	3,500
Շաքաթօրեայ վարժարանի	17,948	17,322	18,000	18,000
Գրասենեակի ծախսերու	6,161	5,666	6,000	7,000
Ջանազան գործունէութեան ..	---	---	500	500
Առաջնորդարանի տուրքի	31,386	24,020	30,000	24,000
Պարտքի Եիջման փոխանցում..	4,700	4,000	---	---
	<u>\$149,845</u>	<u>\$137,505</u>	<u>\$137,500</u>	<u>\$140,000</u>
Ելքի առաւելութիւնն ի դէմ	17,706	16,055		
Պատրաստ գումար Յոլնիւթի 1-ին	39,070	23,015		
Պատրաստ գումար Դեկտ. 31-ին	23,015	23,015		

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԽՏՈՒՈՒԹԻՒՆ
ՊԱՐՏՔԻ ՇԻՋՄԱՆ ՅԱՆՉՆԱՍՈՒՄԲԻ
1 9 8 1 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

1

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>31.12.81</u>	<u>31.12.80</u>
"Քոլնայթրտ Չրրչ" տարեկան վարձքէ	\$ 4,500	\$ 4,000
Դրամատան տոկոսէ	6,432	4,889
Ծխական Խորհուրդէ	4,400	4,700
	<hr/>	<hr/>
	15,332	13,589

Ե Լ Ք

Կալուածի պարտամուրհակներու	12,500	12,500
Կալուածի պարտամուրհակներու տոկոսի ..	1,015	1,828
Դրամատան տոկոսի	2	2
	<hr/>	<hr/>
	13,517	14,330

Մուտքի առաւելութիւն ի դէմ Ելքի	1,815	
Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի		741
Պատրաստ գումար Յոլնուար 1-ին	46,096	46,837
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	47,911	46,096

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ
ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ
1 9 8 1 ՏԱՐԵՐԶԱՆԻ

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>31.12.81</u>	<u>31.12.80</u>
Անդամավճարներէ	360	405
Նուիրատուութիւններէ	302	465
Ճաշերէ եւ ուտեստեղէններէ	2,074	5,545
Տարեկան տօնավաճառէ	6,453	5,508
Ջրօսպտոյտներէ	1,029	1,498
Դրամատան տոկոսէ	2	24
Չանագանքներէ	---	275
	<u>\$10,220</u>	<u>\$13,720</u>

<u>Ե Լ Ք</u>		
Ճաշերու եւ ուտեստեղէններու	1,039	2,493
Տարեկան տօնավաճառի	1,209	1,583
Ջրօսպտոյտներու	687	1,174
Չանագանքներու	275	681
Ծխական խորհուրդի փոխանցում	7,146	8,800
	<u>\$10,356</u>	<u>\$14,731</u>

Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի	136	1,011
Պատրաստ գումար Յոլնուար 1-ին	636	1,647
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	500	636

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ
ԿՈՄԻՏԱՍ ԴՊՐԱՑ ԴԱՍՈՒ
1 9 8 1 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>31.12.81</u>	<u>31.12.80</u>
Եկեղեցւոյ պնակէ	\$ 979	1,160
Նուիրատուութիւններէ	970	645
Տարեդարձի տօնակատարութենէ	1,523	3,679
Երգահանդէսէ	1,373	---
Դրամատան տոկոսէ	55.	85
	<hr/> 4,900	<hr/> 5,569
 <u>Ե Լ Ք</u>		
Երգի գիրքերու տպագրութեան	592	---
Ջանազան ծախսերու	620	507
Երգեհոնահարի	800	200
Տարեդարձի տօնակատարութեան	589	1,125
Երգահանդէսի	1,175	---
Ծխական Խորհուրդոյ փոխանցում	2,500	3,000
Ողջերթի ծաշկերոյթի	307	---
	<hr/> \$6,583	<hr/> \$6.431
 Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի	(1,683)	(862)
Պատրաստ գումար Յոլնուար 1-ին	1,846	2,708
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	163	1,846

ՆԻՒԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹՅՈՒՆ
ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ
1 9 8 1 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

	<u>31.12.81</u>	<u>31.12.80</u>
<u>Մ Ո Ւ Տ Բ</u>		
Գիրքերու վաճառքէ	\$ 3,666	\$ 5,007
Ճայնապնակներու վաճառքէ	208	675
Նկարներու վաճառքէ	115	705
Շարժանկարի ձեռնարկէ	62	---
Նուիրատուութիւններէ	80	275
Դրամատան տոկոսէ	27	27
	<u>\$ 4,158</u>	<u>\$ 6,689</u>

<u>Ե Լ Բ</u>		
Գիրքերու զնման	4,464	4,075
Նկարներու պատրաստութեան	---	494
Տարեդարձի հանդիսութեան	355	590
Բեմի խորքի վարագոյրներու	---	219
Սարեանի նուիրուած ցուցահանդէսի	219	---
Շարժանկարի ցուցադրութեան	102	374
Պարոյր Սեւակի նուիրուած ձեռնարկի	60	---
Ձանազանքի	90	270
Տպագրական ծախսերու	48	---
Ժխական Խորհուրդին փոխանցուած	600	500
	<u>\$ 5,938</u>	<u>\$ 6,522</u>
Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի	---	167
Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի	1,780	---
Պատրաստ գումար Յունուար 1-ին	2,188	2,021
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	408	2,188

Ի ձեռին ունեցած գիրքերու եւ ձայնապնակներու մօտաւոր արժէքն է 2,000

ԸՆԹԱՑԻԿ ԻՆՉՔ

ՊԱՏՐԱՍՏ ԳՈՒՄԱՐ

Պարտքի Եիջման Յանձ.ի մօտ	47,911	
Տիկնանց Միոլթեան մօտ	500	
Կոմիտաս Դպրաց Դասի մօտ	163	
Մամիկոնեան Մշակ. Յանձ.ի մօտ	408	
Ժխական Խորհուրդոյ մօտ	23,015	71,997

ԿԱԼՈՒԱԾ ԵՒ ԻՆՉՔ ԳՆՄԱՆ զԻՆՈՎ

Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցի	250,000	
Յաւելուած Խորանի եւ զանազանք	22,463	
Եկեղեցւոյ պատկան ինքնաշարժի	6,037	278,500
Գանձուեւլիք Պարահանդէսի Յանձ.ի		2,000
		<u>352,497</u>

ՊԱՐՏՔ ԵՒ ԶՈՒՏ ԱՐԺԷՔ

Եկեղեցւոյ կալուածի վերջին վճարում	6,250	
Ընթացիկ պարտքեր	7,000	
Առաջնորդարանի սուրք	3,800	17,050

ԶՈՒՏ ԱՐԺԷՔ

Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցի		335,447
		<u>\$352,497</u>